ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան
03.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/140

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.08.2019թ. թիվ 26/26-1/13377-2019 գրությամբ «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ՊՈԱԿ-ի 05.08.2019թ. թիվ 01/29-958 գրության հիման վրա, 12.08.2019թ. թիվ 26/26-1/13377-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/140 ընթացակարգի շրջանակներում 16.08.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ անկանխատեսելի տեխնիկական բարդությունների պատճառով հրաժարվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/ԳԳ-1» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցությունից:

3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.08.2019թ. թիվ 01/29-958 գրությամբ հայտնել է, որ «ՀՊՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/ԳԳ-1» ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սակայն 01.08.2019թ. Ընկերության տնօրենը գրություն է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, հայտնելով, որ հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/140 ընթացակարգի շրջանակներում 16.08.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/ԳԳ-1» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 6-10-րդ, 16-րդ, 17-րդ, 24-րդ, 26-րդ, 49-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 31.07.2019թ. ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ վերջինս ներկայացրել է գրություն, որի համաձայն՝ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2019թ. թիվ 26/26-1/13377-2019 գրությունը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ՊՈԱԿ-ի 05.08.2019թ. թիվ 01/29-958 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.***<u>հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/ԳԳ-1» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 6-10-րդ, 16-րդ, 17-րդ, 24-րդ, 26-րդ, 49-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 31.07.2019թ. ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ Ընկերությունը 01.08.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչված չափաբաժինների մասով հրաժարվում է «ՀՊՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/ԳԳ-1» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցությունից՝ ելնելով անկանխատեսելի տեխնիկական բարդություններից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ վերջինս ներկայացրել է գրություն, որի համաձայն՝ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե *հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Այսպիսով՝ «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 6-10-րդ, 16-րդ, 17-րդ, 24-րդ, 26-րդ, 49-րդ և 54-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 01.08.2019թ. գրությամբ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ուստի արձանագրում եմ, որ վերջինս թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.08.2019թ. թիվ 26/26-1/13377-2019 գրությամբ ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱՅ ՔՈՐՆԸՐ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**